«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի

տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր

Ռ. Ա. Սաֆրաստյան

«28» օգոստոսի 2020 թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Դավիթ Արթուրի Կարապետյանի

«Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես Հայոց պատմության սկզբնաղբյուր»

Է .00.05 - «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԿԱՐԾԻՔԸ հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելք բաժնի 2020 թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն հմ 15):

ԲԱԺՆԻ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ.

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելք բաժնի վարիչ, պատմական գիտ. դոկտոր Ա. Հակոբյանը, բաժնի ավագ գիտաշխատողներ, պատմական գիտ. թեկնածուներ Ա. Մաթեւոսյանը, Կ. Ավետյանը, Բ. Մաիլյանը, Գ. Մխիթարյանը, Գ. Մարգարյանը, ավագ լաբորանտ Ա. Տոնոյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտ. թեկնածու Գ. Այվազյանը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելք բաժնի վարիչ Ալեքսան Հակոբյանը եւ ավագ գիտաշխատողներ Արթուր Մաթեւոսյանը, Բենիամին Մաիլյանը, Գոհար Մխիթարյանը, Կարինե Ավետյանը եւ Գրիգորի Այվազյանը:

Ելույթ ունեցողները եւ քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Երեւանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի ասպիրանտ Դավիթ Կարապետյանի ատենախոսության (ղեկավար՝ պատմական գիտ. դոկտոր երջանկահիշատակ Պավել Չոբանյան) թեման ունի ե՛ւ գիտական, ե՛ւ արդիական-ճանաչողական ու հասարակաքաղաքական որոշակի նշանակություն: Ատենախոսը կարողացել է բազմակողմանիորեն վեր հանել ընտրված թեմայի ողջ ժամանակային միջակայքին վերաբերող հիմնախնդիրները եւ ներկայացնել դրանց մեկնաբանությունները պահանջված գիտական մակարդակով: Դրա շնորհիվ ընթերցողը լիարժեք հնարավորություն է ստանում ամբողջական պատկերացում

կազմել Հայոց պատմության համար ԺԸ դարի վրաց նշանավոր մատենագիր, արքայազն Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատության աղբյուրագիտական նշանակության մասին:

Նշվեց, որ Դավիթ Կարապետյանի աշխատությունը բավականաչափ հոկված կառուցվածք ունի՝ բաղկացած Ներածությունից, երեք գլուխներից (իրենց համապատասխան 3, 3 եւ 4 ենթագլուխներով), Եզրակացություններից, Օգտագործված աղբյուրների ու գրականության ընդարձակ ցանկից (Վրացերեն սկզբնաղբյուրներ, Հայերեն սկզբնաղբյուրներ, Այլ լեզուներով սկզբնաղբյուրներ, Աշխատություններ եւ հոդվածներ բաժիններով) եւ «Թբիլիսիի նկարագրությունը» վերտառությամբ հավելվածից:

Աշխատանքի ներածական բաժնում հստակորեն ներկայացված են թեմայի արդիականությունը, ժամանակագրական ու տարածական ընդգրկումը, հետազոտության նպատակները, մեթոդաբանական հիմքերը եւ գիտական նորույթները: Աղբյուրների ու գրականության տեսություն բաժնում լիարժեք ակնարկի ձեւով բնութագրվել են ԺԸ դարին վերաբերող վրացական, հայկական, թուրքական, պարսկական սկզբնաղբյուրները, հայերեն, վրացերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով մեծաքանակ ուսումնասիրությունները (նշենք, որ օգտագործված գրականության ցանկը կազմում է 11 էջ):

Ատենախոսության առաջին գլխում («Վախուշտին ու նրա մատենագրական ժառանգությունը») բազմազան աղբյուրների տեղեկությունների հիման վրա հանգամանալից ներկայացված են Վախուշտի արքայազնի կյանքի կարեւոր դրվագները, նրա եռանդուն գործունեությունը, պատմա-քաղաքական հայացքները, հեղինակի՝ խնդրո առարկա աշխատության աղբյուրները, կառուցվածքն ու բովանդակությունը եւ նրա տեղը ԺԸ դարի այլ նմանատիպ երկերի շարքում:

Յաջորդ գլխում («XV-XVIII դարերի հայոց պատմությունը ըստ Վախուշտի Բագրատիոնիի») մանրամասն լուսաբանված են Վախուշտիի խնդրո առարկա երկում շոշափված կարեւորագույն պատմական դրվագները, որի շնորհիվ ընթերցողին ընդգրկուն պատկերացում է տրվում Վրաստանի, Հայաստանի եւ հարակից երկրների մասին ԺԵ-ԺԶ դարերի ժամանակաշրջանում, այդ երկրների վիճակի վերաբերյալ Սեֆյան Իրանի եւ Օսմանյան կայսրության հակամարտության ոլորտում՝ Վախուշտի Արքայազնի հաղորդած տեղեկությունների հիման վրա հասցնելով քննությունը մինչեւ ԺԸ դ. առաջին կեսի իրադարձությունները:

Վերջին՝ երրորդ գլխում («Պատմական աշխարհագրության հարցերը եւ սոցիալ տնտեսական տեղեկությունները Վախուշտիի աշխատությունում») ըստ Վախուշտիի եւ այլ աղբյուրների տեղեկությունների հանգամանալից ներկայացված են Թբիլիսի մայրաքաղաքը եւ նրա ու ողջ Վրաստանի հայ բնակչությունը ԺԷ-ԺԸ դարերում, հայկական Աշոցք գավառը ԺԸ դ.

առաջին տասնամյակներում, ինչպես նաեւ վերլուծված են Հայաստանին ու հայերին վերաբերող մյուս տեղեկությունները խնդրո առարկա երկում:

Ատենախոսության 10 կետերով եզրակացությունների բաժնում պատշաճ կերպով համառոտ արձանագրված ու ամփոփված են աշխատանքի հիմնական դրույթները եւ հեղինակի եզրահանգումները: Դրան հետեւում են խնամքով կազմված աղբյուրների ու գրականության ցանկը եւ հեղինակի՝ հայերեն թարգմանությամբ «Թբիլիսիի նկարագրությունը» օգտակար հատված-հավելվածը:

Քննարկման ընթացքում նշվեց նաեւ, որ ատենախության ողջ շարադրանքի բոլոր հատվածներն ընդհանուր առմամբ համոզիչ են, հստակ եւ տրամաբանական: Գիտական բոլոր չափանիշներին համապատասխանում է ատենախոսի եզրութաբանական սարվածքը (ապարատը): Ատենախոսի քննարկած հիմնախնդիրներն արդիական են, հրատապ, մեթոդաբանորեն հղկված: Աշխատության առատ աղբյուրագիտական հենքը բավականաչափ հարուստ է: Աշխատանքը բնորոշվում է բազմաբովանդակ պատմական նյութի հմուտ մշակմամբ եւ նրա նորովի ու լիարժեք վերլուծությամբ: Հեղինակն ամբողջապես տիրապետում է այդ նյութին եւ դրսեւորում, ըստ էության, հասուն մասնագետին բնորոշ հետազոտական հմտություններ: Դրա շնորհիվ ատենախոսությունն ունի արդիական հնչեղություն, որն ապահովում է նրա գիտա-տեսական եւ գործնական-կիրառական էական նշանակությունը: Աշխատանքի հիմնական դրույթները նույն պատշաճությամբ արտահայտված են հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Միեւնույն ժամանակ, քննարկման մասնակիցները կատարեցին որոշ դիտողություններ աշխատանքում տեղ գտած ինչ-ինչ թերիների վերաբերյալ եւ արտահայտեցին մի շարք ցանկություններ, որոնց հաշվի առնելը կարող է օգտակար լինել ատենախոսին՝ աշխատության հետագա լրամշակման եւ հրատարակման պարագայում:

Օրինակ՝ նշվեց, որ ատենախոսությունն ավելի կշահեր, եթե Թիֆլիսի ավատական քաղաքային բնակչության կազմը եւ կարգը նկարագրելիս (էջ108) հեղինակն իր գրականության հղումներում նշեր նաեւ Պարույր Մուրադյանի եւ Սամվել Կարապետյանի հայտնի ուսումնասիրությունները, իսկ ԺԸ դարի հեղինակ Յոհան Գյուլդենշտեդտի աշխատությունը (И. Гюльденштедт, Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809) օգտագործեր բնօրինակով, այլ ոչ թե Պարույր Մուրադյանի աշխատության տողատակի հղումով: Օգտակար կլիներ նաեւ նկատի ունենալ Ս. Կարապետյանի՝ Ջավախքին նվիրված ծավալուն մենագրությունը:

Մեր կարծիքով՝ այնուամենայնիվ ավելի ճիշտ կլիներ գրականության ցանկում առաջինը նշել հայերեն աշխատանքները, հետո միայն՝ վրացերենը:

Որոշ դեպքերում կա անունները եւ եզրույթները ճշգրիտ օգտագործելու խնդիր: Օրինակ՝ «Մռովելի»՝ փոխանակ «Մրովելի» (էջ 11, ծնթ. 21), «քրիստոնյա Վրաստան»՝ փոխանակ «քրիստոնեական Վրաստան» (էջ 17):

Այդուհանդերձ, նիստի մասնակիցների կողմից նշված դիտողությունները որեւէ չափով չեն նսեմացնում ատենախոսի կատարած ծավալուն աշխատանքի էական արժանիքները:

Դավիթ Կարապետյանի թեկնածուական ատենախոսությունը գրված է բավարար գիտական մակարդակով, անսխալ, հաճելի ընթերցվող հայերենով: Աշխատանքի Սեղմագիրը լիովին արտացոլում է նրա բովանդակությունը: Ատենախօսութիւնը, մեր կարծիքով, կարելի է դասել մերօրյա հաջողված մենագրական հետազոտությունների շարքին: Նրա հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի կողմից Սեղմագրի վերջում թվարկված հոդվածներում: Սեղմագրի վերջում դրված ռուսերեն եւ անգլերեն ամփոփումները կազմված են մեծ խնամքով:

Կարելի է համոզված լինել, որ Դավիթ Կարապետյանի՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես Հայոց պատմության սկզբնաղբյուր» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, հետեւաբար նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանին:

Այսպիսով՝ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելք բաժնի նիստը ՈՐՈՇԵՑ միջնորդել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտական խորհրդին՝ Դավիթ Արթուրի Կարապետյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի
Քրիստոնյա Արեւելք բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր՝ Ա. Հ. Հակոբյան

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու՝ Գ. Ա. Մարգարյան

29.07.2020 թ.